

կայ ընդարձակ քարվանսարայ մը, կառուցուած Շահ Ապպասի հայոց գործածութեան համար, որոնք հոս հաստատուած էին մեծ թիւերով: Եւ եթէ հոն կան Մր. էլզօնի երեւակայածին նման ակնկալեալ առաւելութիւններ, անոնց (հայոց) չպիտի պակսին կարողութիւն, կամ միջոցներ ատիկա օգտագործելու համար»:

Եւ Հանուէյ կ'աւելցնէ .

«Անհաւանական չէ, որ Պարսից դահաժառանգը աւելի պատրաստակամութեամբ յօժարեցաւ Մր. էլզօնի առաջարկութեան Անգլիայէն Գիլան ապրանք բերելու, որովհետեւ Շահին վաճառականը այդ ատեն այս դաւառին մէջ կը բնակէր: Իսկ Մէշէյէ կը գտնուի աւելի մօտիկ Թրքաց (որոնց հետ պարսիկները յաճախ պատերազմի մէջ են) եւ Հնդկաստանի այն մասին, որուն վերջերս տիրացան պարսիկները: Բայց ասիկա չէր միակ պատճառը, որովհետեւ անիկա անդէտ չէր կրնար մնալ սա պարզ իրողութեան, որ աւելցնելով ներածման վայրերը եւ ներածողներու թիւը՝ Եւրոպական արտադրութիւնները շատ աւելի աժան պիտի կրնայ գնել (մրցակցութեան պատառաւ): Գալով Պարսկաստանի հիւսիսային գաւառներուն եւ Թուրքիոյ միջեւ եղած վաճառականութեան՝ Մր. էլզօն շատ յուսալից է: Ռուսիոյ վրայով փոխադրութեան ծախքերը այն ատեն իրր հարիւրին տասնեւեօթը հաշուուած էին, որով՝ աւելի աժան Թուրքիոյ վրայով անցնող ճանապարհին (ծախքերէն): Սակայն, ըստ այն լուսաւոյն հաշիւներուն, որոնք կրնայ ձեռք բերել, եւ հարիւրին չորսէ աւելի տարբերութիւն չգըտայ: Եւ եթէ Չմիւռնիայէն կամ Հալէպէն նաւողչէքը չափաւոր ըլլայ, տարբերութիւնը աւելի կը նուազի: Եւ որովհետեւ Պարսկաստանէն Թուրքիա, Չմիւռնիոյ մեր ներկայացուցիչներուն որեւէ ապրանքի կարաւան դոյութիւն չունի, եւ այս (բեռ փոխադրելու) հաշուհամարը միայն կարելի է հայերէն ըստանալ, (փոխադրութեան) սակը այսպիսով պէտք է տարբերի այս երկու երկիրներուն պատերազմի կամ խաղաղութեան վիճակի համեմատ»:

Շարունակելով Հանուէյ կ'ըսէ .

«Թուրքիոյ եւ Պարսկաստանի միջեւ առեւտուրը մեծ մասամբ կը կատարուի Հայոց միջոցով, որոնց մասին յորքան որ կրցայ սորվիլ, Թուրքիոյ մէջ տեղաւորուած նուազ չեն քան տասը հազար*): Ասոնք գլխաւորաբար կը գործածուին Անգլիացի, Ֆրանսացի եւ Հոլանտացի վաճառականներէ Կ. Պոլիս, Չմիւռնիա եւ Հալէպ բնակող: Երկար ատենէ ի վեր անոնք ինքզինքնին ճանչցուցած են իրր Ասիոյ ամենէն թափանցկոտ առեւտրականները, եւ շուկայ կը բերեն Արեւելքի արտադրութիւնները, վերադարձնելով Եւրոպականը:

«Պատերազմները եւ ժառանգական թշնամութիւնը Թրքաց եւ Պարսից միջեւ յաճախ արդիւած են վաճառականութիւնը Թրքաց եւ Պարսից միջեւ, ինչ որ ստիպած է Հայ առեւտրականները մեծ մասամբ Ռուսիայէն անցնիլ Կասպից ծովուն վրայէն: Բայց եթէ Պարսկաստան դարձեալ ինքզինքը գտնայ, որպէսզի կարենայ նկատելի չափով հում մետաքս արտադրել, շատ հաւանական է, որ Թուրքիոյ Հայ հպատակները, որոնք Թաւրիզի եւ Էրզրումի մէջ ու շուրջ կը բնակին, պիտի դան տիրանալու վաճառականութեան այդ ճիւղին մէկ մեծ բաժնին:

«Կարաւաններուն հասարակ ուղին է Ռէշտէն Չմիւռնիա, նախ՝ Արդէբիլ հինգ օր, Թաւրիզ տասը օր, Էրզրում տասներկու օր, ուրկէ Չմիւռնիա քառասունեւերեք, համադումարը՝ եօթանասուն օր: Հալէպի ճանապարհն է Ռէշտէն Կազվին, Համատան, Շուսղըր, Պաղտատ, Հալէպ: Ամբողջը տասը օրով աւելի կարճ է քան Չմիւռնիայինը: Դեռ ասկէ ալ կարճ ճանապարհ մը կայ դէպի Հալէպ, որ, սակայն, գէշ կերպով ջրուած է: Հալէպէն Չմիւռնիա քառասուն օր կը հաշուուի, օրուան մը ճանապարհը հաշուելով քսան եւ հինգ Անգլիական մղոն: Եօթանասուն օրուան ուղին

*) Ասով հեղինակը անշուշտ հում մետաքսի առեւտուրով զբաղող հայերուն թիւը ըսել կ'ուզէ, այլապէս Թուրքիոյ Հայոց թիւը նոյն իսկ յիշեալ երեք քաղաքներուն մէջ հարիւր հազարի մօտ էր: Յ. Բ.